

© Association of Judges of the RA,
http://www.judge.am/index.php?option=com_content&view=category&layout=blog&id=36&Itemid=60&lang=en. [Translation already published in Collection of judgments of ECHR in Volume 8, 2013.] Permission to re-publish this translation has been granted for the sole purpose of its inclusion in the Court's database HUDOC.

CASE OF ENGEL v. HUNGARY - [Armenian Translation] by the Association of Judges of the RA

ԷՆԳԵԼՆ ԸՆԴԴԵՄ ՀՈՒՆԳԱՐԻԱՅԻ ԳՈՐԾԸ

2010թ. մայիսի 20 վճիռը

ՍՏՐԱՍԲՈՒՐԳ

ՓԱՍՏԵՐ

I. ԳՈՐԾԻ ՀԱՆԳԱՍԱՆՔՆԵՐԸ

5. Դիմողը ծնվել է 1962 թվականին և բնակվել Սզեգեդում:

6. 2003թ. մայիսի 13-ին դիմողին բռնել են զինված կողոպուտ կատարելու ընթացքում: Փոխադարձ կրակոցների արդյունքում նա սպանել է մի ոստիկանի և մեկ ոստիկանի էլ՝ վիրավորել: Նա վիրավորվել է մեջքի շրջանում, ինչի արդյունքում նրա երկու ոտքերն էլ գոտկատեղից սկսած կաթվածահարվել են: Բացի դրանից, նա տառապել է կենտրոնական նյարդային համակարգի խախտումով: Այժմ նա 100 տոկոսով անդամալույծ է, կարող է շարժվել միայն հատուկ սայլակով, ավելին՝ նա ստիպված է օգտագործել տակդիրներ:

7. Դիմողը դատապարտվել է ցմահ ազատազրկման Սզեգեդի բանտում: 2005թ. փետրվարի 25-ից մինչև 2006թ. դեկտեմբերի 15-ը նա կալանավորված է եղել Սզեգեդի բանտում:

8. Դիմողը Սզեգեդի բանտի պայմանները նկարագրել է հետևյալ կերպ. քանի որ նա ի վիճակի չի եղել իր առողջ բանտակիցների համար սովորական համարվող պարտականություններ կատարել, ստիպված քնել է հագուստով՝ չբացված մահճակալին և որպես ծածկոց օգտագործել է իր ժակետը՝ վախենալով, որ իրեն կարող են պատժել անկողինը ժամանակին հարդարելու առօրյա կարգը խախտելու համար: Անձնակազմի կողմից չստանալով որևէ օժանդակություն՝ նա կարող էր լվացվել կամ զուգարան գնալ, եթե միայն իրեն օգնեին բանտակիցները: Իրեն չեն տրամադրել պատշաճ լողարանային աթոռ, փոխարենը՝ տվել են կոտրված զուգարանակոնք, որը հարմար չի եղել լողանալու համար: Այն շատ շուտ լիովին դուրս է եկել շարքից, մեկ անգամ էլ կոտրվել է իր տակ: Քանի որ ինքն իր բանտակիցների կողմից ենթարկվել է ծաղրանքի իր հաշմանդամության և կենտրոնական նյարդային համակարգի խախտ-

ման պատճառով, չի մասնակցել ամենօրյա զբոսանքներին: «4-րդ կարգի» վտանգավորության աստիճան ունենալով՝ նա տրանսպորտով տեղափոխվել է ձեռքերին կրելով ձեռնակապեր, որոնք ողջ ընթացքում այդ կպած են եղել իր գոտուն: Քանի որ նա մեքենայով տեղափոխվել է այդ դիրքով՝ առանց ամրագոտու, նա կարողացել է ինքն իրեն պահել իր անվասայլակուն բացառապես գլուխը տրանսպորտային միջոցի խցիկի դռանը հենելու միջոցով: Արդյունքում, նա գլխին պարբերաբար ունեցել է ուռուցքներ: Տրանսպորտային միջոց նստելիս կամ դուրս գալիս անձնակազմը քաշել է նրան գոտուց, երբեմն՝ գետնի վրայով՝ պատճառելով նրան վնասվածքներ: Նման միջադեպ է տեղի ունեցել 2006թ. հունիսի 12-ին: Այլ դեպքերում անվասայլակը՝ դիմողի հետ մեկտեղ, կշռելով 110 կիլոգրամ ինքը մեջը նստած՝ գլորել են ներքև տրանսպորտային միջոցի աստիճաններով:

9. Դիմողի բողոքները վերը նշված պայմանների դեմ՝ ուղղված Քսոնգրադ շրջանի Գլխավոր դատախազին, եղել են ապարդյուն:

10. Բանտի բժշկական ծառայության համաձայն՝ դիմողը տառապել է, *inter alia*, արյան բարձր ճնշումից, գիրությունից, ստորին վերջույթների կաթվածից և միզապարկի հիվանդությունից: Խորհուրդ է տրվել նրան տեղափոխել հատուկ ուղղիչ հիմնարկ, սակայն բանտի վարչակազմն այդ առաջարկն անտեսել է: Դիմողի բողոքի հիման վրա Ուղղիչ հիմնարկների ազգային վարչությունը քննել է նրա հարցը: Դրա եզրակացության համաձայն՝

«Դիմողը բանտախուցը գտնվում է ստորին հարկում ... բուժկետի հարևանությամբ: Այն հարմարեցված է չորս հոգու համար, սակայն դիմողն էլ հետը՝ երկու կամ երեք հոգի է այնտեղ մնացել: Կահույքը հարմարեցված է դիմողի առողջական վիճակին. սեղանը բարձրացվող-հջեցվող է, մահճակալները հիմնականում մեկ տեղանոց են, զգեստապահարանը և հայելին տեղակայված են դիմողի համար հարմար բորձրության վրա, վերացվել են բոլոր խոչընդոտները մուտքի մոտ, իսկ զուգարանի կողքին ամրացվել են բռնակներ: Բանտակիցներից մեկն ինքնական ստանձնել բանտախուցը մաքուր պահելու և դիմողին իր առօրյա պարտականությունները կատարելիս օգնելու ողջ բեռը: Դիմողը երբեք չի պատժվել բանտախուցը կարգին պահելու խախտումների համար:

Դիմողն ունեցել է ամեն օր տաք ցնցուղ (լոգանք) ընդունելու հնարավորություն: Ցնցուղը և լոգարանի աթոռը հարմարեցված են եղել իրեն ...: Նրա բանտակիցը ինքնական օգնել է դիմողին լվացվել ...

... Բանտակիցների կողմից վիրավորանքների ենթարկվելուց խուսափելու համար դիմողին տրվել է զբոսնելու [հատուկ հսկվող] բակում հնարավորություն: Դիմողը, սակայն, հրաժարվել է օգտագործել այդ հնարավորությունը:

Դիմողի բողոքի հիման վրա ... 2006թ. մայիսի 30-ին հսկողի որոշման համաձայն տրանսպորտային միջոցում տեղադրվել է անվտանգության գոտի, որի մասին դիմողը տեղեկացվել է ... վերջինս տեղյակ է եղել նաև այն փաստի մասին, որ բժշկական եզրակացության հիման վրա նրան շտապօգնության մեքենայով տեղափոխելը մերժվել է: Քննությանը պարզված փաստերի հիման վրա դիմողն ունեցել է թեթև քերձվածքներ և կապտուկներ [տրանսպորտային միջոցում գտնվելու ընթացքում] 2004թ. դեկտեմբերին և 2006թ. հունիսին: Այդ իսկ պատճառով ուղղիչ հիմնարկի վարչակազմը հրահանգել է անձնակազմին դիմողի նկատմամբ ցուցաբերել հատուկ հոգածություն: Իրավասու բուժիմնարկի կարծիքի համաձայն՝ դիմողին տեղափոխելը չի պահանջել բուժանձնակազմի մասնակցություն:

2006թ. ապրիլի 21-ին դիմողը խնդրել է իրեն տեղափոխել Նագիֆայի ուղղիչ հիմնարկ: 2006 թվականին Ուղղիչ հիմնարկների վարչությունը մերժել է այդ խնդրանքն այն հիմքով, որ նա իր ազատագրվումը կրել այնպիսի ուղղիչ հիմնարկում, որի խստությունը համապատասխանել է նրա կողմից կատարված հանցանքին և նրա նկատմամբ նշանակված ռեժիմին, որտեղ լուծված է եղել նրա նկատմամբ հոգածության և բուժվերահսկողության հարցը, և որտեղ վերացված են եղել բոլոր ֆիզիկական խոչընդոտները, որպեսզի ապահովվի նրա ազատ շարժը անվասայլակով: Դիմողը բո-

դոքարկել է այդ որոշումը: 2006թ. հուլիսի 26-ին բողոքը մերժվել է Ազգային Կոմանդերի կողմից, որի հիման վրա տեղի չի ունեցել նրա տեղափոխումը: Որոշման պատճառաբանության համաձայն՝ «[դիմողը] չի ունեցել անընդմեջ հոգածության կամ բժշկական վերահսկողության կարիք: Նրա կալանավորման առաջին վայրում շենքում իրականացվել են համապատասխան վերափոխումներ, ինչպես պահանջում է նրա հաշմանդամությունը: Նրա ներկա դրությանը համապատասխանող բժշկական օգնությունը կարող է ցուցաբերվել նրա ազատագրկման ներկայիս հիմնարկում, ուր ամեն բան հարմարեցված է նրա կարիքներին ...»:

11. Դիմողը հայտարարել է, որ տրանսպորտային միջոցն ապահովված չի եղել անվտանգության ամրագրուիով մինչև 2006թ. օգոստոսը: Ջբոսանքների առթիվ նա բացատրել է, որ բակի մակերեսը եղել է անհարթ, այդ իսկ պատճառով այն հարմար չի եղել անվասայլակի համար:

12. Քանի որ նրա նկատմամբ իրականացվել են քրեական գործով այլ քննություններ, դիմողը պարբերաբար տեղափոխվել է Բուդապեշտ՝ դատարանում ներկա գտնվելու համար: 2006թ. սեպտեմբերի 5-ին Բուդապեշտի կալանավայրի տեղափոխումների վարչության ղեկավարին ներկայացված բողոքում դիմողը հայտարարել է, որ 2006թ. սեպտեմբերի 4-ին նա մնացել է մի բանտախցում, որտեղ ստիպված է եղել անցկացնել հինգ ժամ առանց ջրի և առանց տակդիրները փոխելու հնարավորության: Նա նաև հայտարարել է, որ տեղափոխման ընթացքում նրան տեղավորել են տրանսպորտային միջոցում գտնվող մեկտեղանոց խցում, որտեղ նա ստացել է կապուկներ: Շրջադարձներին նա ընկել է անվասայլակի միջից և ճանապարհն անցել է գետնին ընկած վիճակում, ձեռնակապերով, ձեռքերը մարմնի տակ դրված վիճակում: Ապա նա հայտարարել է, որ հաջորդ օրը, երբ նա խնդրել է անցկացնել բժշկական ստուգում, բուժքույրը տեղեկացրել է նրան, որ հնարավոր չէ իրականացնել որևէ բժշկական հետազոտություն մինչև հաջորդ շաբաթական խորհրդատվությունը, որը կիրականացվի հաջորդ երկուշաբթի:

13. 2006թ. սեպտեմբերի 18-ին հետագա քննության ընթացքում կատարվել է բժշկական հետազոտություն, սակայն չի հայտնաբերվել որևէ արտաքին վնասվածքի նշան: Ապացույցների բացակայության պայմաններում, 2006թ. հոկտեմբերի 3-ին Բուդապեշտի ուղղիչ կալանավայրի հսկողը մերժել է դիմողի բողոքը:

14. Դիմողի բողոքի հիման վրա՝ Սզեգեդի գինվորական դատախազի կողմից հարուցվել է քրեական գործ անհայտ անձանց նկատմամբ՝ վարչական իրավասությունները չարաշահելու մեղադրանքով, սակայն այն կասեցվել է 2006թ. դեկտեմբերի 12-ին Սզեգեդի գինվորական դատախազի կողմից՝ ապացույցների բացակայության հիմքով:

15. 2006թ. հոկտեմբերի 27-ի նամակում՝ ուղղված Ազգային Կոմանդերին, դիմողը բողոքել է իր տեղափոխման ժամանակ ստացած վնասվածքների և իր անվասայլակի անսարքության առթիվ: Յետագա քննությամբ չեն հիմնավորվել դիմողի բողոքները՝ կապված վնասվածքների հետ, իսկ նրա անվասայլակը համապատասխանաբար վերանորոգվել է:

16. 2006թ. դեկտեմբերի 15-ին դիմողը տեղափոխվել է Սոպրոնկոհիդայի ուղղիչ հիմնարկ, ուր տեղավորվել է մեկտեղանոց բանտախցում, որն ստեղծված է եղել հատուկ հաշմանդամ բանտարկյալների համար: 2006թ. դեկտեմբերի 18-ին նա հետազոտվել է դատական բժշկի կողմից: Իր եզրակացության մեջ մասնագետը նշել է հետևյալը.

«...[տվյալ հարցի առթիվ] բանտարկյալը ... մասամբ կամ լիովին չափազանցել է իր ցավերը ... [Նա] 100 տոկոսով հաշմանդամ է ... [սակայն], այդուհանդերձ, լիովին անկարող չէ հոգ տանել իր մասին: Նրա չափազանց շատ ուտելը՝ ցավազրկող միջոցներ ընդունելուց հրաժարվելու հետ մեկտեղ, ... առաջացնում է լուրջ հոգեբանական բարդություն նրա շարժունակությունը զարգացնելու համար: Միևնույն ժամանակ ... չի կարելի միանշանակ պնդել, թե նա իրոք ունենում է ցավեր: Դատաբժշկական տեսանկյունից կարելի է հաստատել, որ ... բանտարկյալն ստացել

է բոլոր անհրաժեշտ բժշկական, բուժակային և խնամքի հետ կապված օգնությունը, որի կարիքն ունեցել է»:

II. Համապատասխան ներպետական օրենսդրությունը

17. Դատապարտման և մինչդատական կալանքի իրականացման կանոնների առթիվ արդարադատության նախարարի՝ թիվ 6/1996 (VII.12.) որոշման համաձայն՝

Մաս 42(3)d

«Տվյալ բանտարկյալները պետք է որակվեն իբրև «4-րդ աստիճանի վտանգավորության» բանտարկյալներ, քանի որ կան հիմնավոր կասկածներ, որ նրանք կկատարեն ուղղիչ հիմնարկի կանոնները կոպտորեն խախտող արարք՝ փախչելու կամ իր կամ այլոց կյանքը վտանգելու նպատակով, կամ արդեն կատարել են նման գործողություններ, այդպիսիք են նաև այն բանտարկյալները, որոնց անվտանգ ազատազրկումը կարող է երաշխավորվել միայն հսկելու կամ բացառապես վերահսկողության միջոցով»:

III. Եվրոպական հանձնաժողովի հաշվետվությունները խոշտանգումների կամ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխման վերաբերյալ

18. 1999թ. դեկտեմբերի 5-16-ին Յունգարիա այցելելուց հետո հունգարական կառավարությանն ուղղված CPT հաշվետվության համաձայն՝

«96. Յունգարիայում գործող՝ բանտարկյալներին դասակարգելու համակարգի ներքո կալանավորված կամ ազատազրկման դատապարտված բանտարկյալները, որոնք համարվում են վտանգավոր, տեղավորվում են 4-րդ կարգում (Արդարադատության նախարարի՝ թիվ 6/1996 (VII.12.) որոշում): Տվյալ հարցով որոշումը կայացնում է կամ դատախազը, կամ դատարանը, կամ էլ հաստատության ընդունող հանձնաժողովը: CPT-ն տեղեկացվել է, որ դատարանները և դատախազները, որպես կանոն, այս կարգը տալիս են այն բանտարկյալներին, որոնք դատապարտված են ծանր հանցագործությունների համար (հատկապես՝ կազմակերպված հանցագործությունների մեջ ներգրավված անձինք), իսկ ազատազրկման վայրի ընդունող հանձնաժողովը՝ վատ վարքագիծ ունենալու մասին առկա տվյալներով անձանց (ներառյալ նրանց, ովքեր հակված են փախուստի, կամ նրանց, ովքեր կատարել են մահափորձ) կամ զինվորական նկատառումներով:

4-րդ կարգի բանտարկյալի կարգավիճակը վերանայվում է վեց ամիսը մեկ: Այդուհանդերձ, ստացվում է, որ 4-րդ կարգ տալու կամ այն անփոփոխ թողնելու որոշման համար հիմք հանդիսացած պատճառները չեն պարզաբանվում տվյալ բանտարկյալին:

97. Ակնհայտ է, որ բանտարկյալը չպետք է մնա հատուկ հսկողության ռեժիմում, եթե չկա դրա անհրաժեշտությունը: Դա պահանջում է պարբերաբար վերանայել համապատասխան որոշումը: Բացի դրանից, բանտարկյալը պետք է հնարավորինս տեղեկացված լինի իրեն տվյալ կարգավիճակը տալու պատճառների մասին, և անհրաժեշտության դեպքում այդ կարգավիճակը վերականգնելու պատճառների մասին, դա, *inter alia*, նրանց հնարավորություն կտա արդյունավետորեն կիրառել այդ կարգավիճակը վիճարկելու միջոցները»:

19. 2005թ. մարտի 30-ից ապրիլի 8-ը Յունգարիա այցելելուց հետո հունգարական կառավարությանն ուղղված CPT հաշվետվության համաձայն՝

«64. 4-րդ կարգ ունեցող բանտարկյալների համար կիրառելի իրավական երաշխիքների առնչությամբ նրանց կարգավիճակն այժմ վերանայվում է երեք ամիսը մեկ (1999թ. այցելության ժամանակ վերանայումը տեղի էր ունենում վեց ամիսը մեկ): CPT-ն ողջունում է այս փոփոխությունը: Այդուհանդերձ, CPT-ի՝ վաղուց ի վեր առկա մյուս խորհուրդները՝ կապված կարգավիճակի պատճառների առթիվ գրավոր տեղեկություն բանտարկյալներին տրամադրելու և նրանց հարցի առթիվ իրենց սեփական կարծիքն արտահայտելու հնարավորություն ընձեռելու հետ, չի գործադրվել:

Պատվիրակության կողմից քննված 4-րդ կարգի շատ բանտարկյալներ բողոքել են, որ իրենք չեն տեղեկացվել իրենց այդ կարգավիճակն տալու պատճառների մասին, չեն մասնակցել վերանայման գործընթացին և չեն ստացել որևէ տեղեկություն այն վիճարկելու հնարավորությունների վերաբերյալ: Ապա զգացվել է, որ 4-րդ կարգի վերանայումը կրել է զուտ ձևական բնույթ: Համապատասխան թղթաբանության ուսումնասիրությունը և բանտարկյալների հետ զրույցները թույլ են տվել պատվիրակությանը եզրակացնել, որ 4-րդ կարգը պահպանելու համոզիչ փաստարկներն ունեն պատմական բնույթ՝ ինչպիսին է կատարված հանցագործության դաժան բնույթը (հաճախ շատ տարիներ առաջ), դա ունի առավել մեծ նշանակություն, քան բանտարկյալի կողմից կատարված տվյալ հանցագործության վտանգավորությունը կամ անթույլատրելի ճանապարհով կրկին գործելու հակվածությունը:...

184. 2005թ. այցելության ընթացքում հատուկ ուշադրություն է դարձվել հատուկ հսկողության ռեժիմի պայմաններում պահվող բանտարկյալների խնդրին: CPT-ն ողջունել է այն փաստը, որ 4-րդ կարգ ունեցող բանտարկյալների կարգավիճակն այժմ վերանայվում է երեք ամիսը մեկ, միևնույն ժամանակ այն կոչ է արել հունգարական իշխանություններին կիրառել իր կողմից տրված նախորդ խորհուրդը՝ նման բանտարկյալներին կարգավիճակի մասին գրավոր տեղեկացնելու, ինչպես նաև հարցի առթիվ իրենց սեփական կարծիքն արտահայտելու կապակցությամբ: Ընդհանուր առմամբ, Հանձնաժողովը խորհուրդ է տվել, որպեսզի 4-րդ կարգ սահմանող համակարգը վերանայվի և վերացվի այն դեպքում, եթե երաշխավորվում է, որ այս կարգը կիրառվում և պահպանվում է միայն այն բանտարկյալների նկատմամբ, որոնք ակնհայտորեն համապատասխանում են այս կարգավիճակին:

4-րդ կարգը պահպանելու միջոցների կիրառման քաղաքականությունը արդեն իսկ խիստ քննադատվել է CPT-ի կողմից և դեռ մնում է ոչ բավարար: Հանձնաժողովը կոչ է արել հունգարական իշխանություններին անհապաղ վերանայել այդ քաղաքականությունն»:

Իրավունքի հարցեր

1. Կոնվենցիայի 3-րդ հոդվածի վիճարկվող խախտում

20. Դիմողը բողոքել է, որ նրա բանտարկման և տեղափոխման պայմանները հանգեցրել են անմարդկային և նվաստացնող վերաբերմունքի կամ իրենցից ներկայացրել են իր անձնական կյանքը հարգելու իրավունքի խախտման: Նա հայտարարել է, որ իրեն 4-րդ կարգի բանտարկյալ որակելը, որն անհնարին է եղել վիճարկել ներպետական մարմինների առջև, անհեթեթ է եղել՝ հաշվի առնելով իր առողջական վիճակը, և հանգեցրել է նրան, որ իր բանտարկությունն ունենա անմարդկային բնույթ: Նա հիմնվել է Կոնվենցիայի 3-րդ և 8-րդ հոդվածների վրա՝ ինչպես առանձին վերցրած, այնպես էլ 13-րդ և 14-րդ հոդվածների հետ մեկտեղ:

21. Դատարանը գտնում է, որ դիմողի բողոքները պետք է քննվեն միայն 3-րդ հոդվածի ներքո, համաձայն որի.

«Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի»:

22. Կառավարությունը վիճարկել է այդ փաստարկը:

A. Ընդունելիություն

23. Դատարանը նկատում է, որ դիմումն ակնհայտորեն անհիմն չէ Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի իմաստով: Ապա Դատարանը նշում է, որ այն անընդունելի չէ որևէ այլ հիմքով: Այդ իսկ պատճառով այն պետք է հայտարարվի ընդունելի:

B. Հիմքերը

24. Կառավարությունը նախևառաջ հայտարարել է, որ Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին կետում ամրագրված վեց ամսվա ժամկետը՝ ժամանակահատված, որի

ամնչութեամբ պետք է քննվեն դիմողի կալանքի պայմանները, սկսվել է միայն 2006թ. մարտի 21-ից (6 ամիս առաջ այն օրվանից, երբ դիմողը ներկայացվել է) և լրացել է 2006թ. դեկտեմբերի 15-ին, երբ նա տեղափոխվել է Սոպրոնկյոհիդա բանտի շենք: Վերջին միջոցի առթիվ նշվել է, որ այս հիմնարկը կառուցված է եղել հատուկ հաշմանդամ բանտարկյալների համար: Ինչ վերաբերում է Սզեգեդի բանտում անցկացրած ժամանակահատվածին, Կառավարությունն այն կարծիքի է, որ վիճարկվող պայմանները և միջադեպերը չունեն 3-րդ հոդվածով նախատեսված խստության նվազագույն մակարդակը, հատկապես դրանք գործադրելու՝ իշխանությունների կողմից ձեռնարկված հապճեպ միջոցների տեսանկյունից: Կառավարությունը չի տեսնում նաև դիմողի՝ Կոնվենցիայի 8-րդ հոդվածով նախատեսված իրավունքի խախտում, քանի որ նրա անձնական սահմանափակումը եղել է նրա ազատագրկման խիստ ռեժիմի անհրաժեշտ հետևանքը:

25. Դիմողը վիճարկել է այդ միջոցները, բացթողումները և միջադեպերը, որոնք հանգեցրել են Կոնվենցիայի 3-րդ հոդվածով նախատեսված անմարդկային և նվաստացնող վերաբերմունքի, և դա վերաբերում է Սզեգեդի բանտում անցկացրած ողջ ժամանակահատվածին: Վիճարկվող հարցը հանգեցրել է Կոնվենցիայով նախատեսված իրավունքների շարունակական խախտման, այդ իսկ պատճառով Կառավարության հղումը 6 ամսվա ժամանակահատվածի նորմին՝ սխալ է: Հատկապես այն փաստը, որ նա երկար ժամանակ թողնված է եղել իր բանտակիցների հույսին, որոնք էլ ապահովել են նրա այնպիսի հիմնական կարիքների բավարարումը, ինչպիսիք են զուգարան գնալը, լողանալը կամ հագնվել-հանվելը, անընդունելի է: Նմանապես, ավտոմեքենայով նրան տեղափոխելն առանց ամրագոտիների, որոնք պետք է պահեին նրա անվասայլակը տեղում, նրան մեքենա նստեցնելու և մեքենայից իջեցնելու կոպիտ ձևերի հետ մեկտեղ, եղել են անմարդկային: Այս իրավիճակն էլ ավելի է բարդացել նրան 4-րդ կարգի վտանգավորության բանտարկյալ դասակարգելու պատճառով, որը հնարավոր չի եղել վիճարկել ուղղիչ հիմնարկի իշխանությունների առջև, և որը բացարձակ արդարացված չի եղել իր պարապլեգիայի (անդամալուծության) տեսանկյունից: Այդ դասակարգման հետևանքով տեղափոխվելու ընթացքում նրան պահել են ձեռնակապերով, ինչը հնարավորություն չի տվել հսկելու իր դիրքը մեքենայի շարժման մեջ լինելու ընթացքում:

26. Դատարանը կրկնում է, որ վատ վերաբերմունքը պետք է ունենա խստության նվազագույն մակարդակ, եթե այն 3-րդ հոդվածի սահմաններում է: Այս միևնույն մակարդակի գնահատումը հարաբերական է; այն կախված է ֆիզիկական և հոգեկան հետևանքներից, իսկ որոշ դեպքերում՝ տուժողի սեռից, տարիքից և առողջական վիճակից: Երբ որոշվում է, թե արդյոք վերաբերմունքը «նվաստացնող» է 3-րդ հոդվածի իմաստով, այն հանգամանքներից մեկն է, որը Դատարանը հաշվի կառնի, այն է՝ արդյոք դրա նպատակն է եղել տվյալ անձին նվաստացնելը կամ նրա վիճակը վատթարացնելը, չնայած որ նման ցանկացած նպատակի բացակայություն չի կարող ի վերջո հանգեցնել 3-րդ հոդվածի խախտման հայտնաբերմանը (տես՝ Փրայսն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով թիվ 33394/96 վճիռը, կետ 24, ECHR 2001-VII, Փիիրսն ընդդեմ Հունաստանի գործով թիվ 28524/95 վճիռը, կետեր 67-68 և 74, ECHR 2001-III):

27. Տվյալ գործով անդամալույծ դիմողը թողնված է եղել իր բանտակիցների հույսին, երբ զուգարան գնալու, լողանալու, հագնվել-հանվելու կարիք է ունեցել (տես Վինսենտոն ընդդեմ Ֆրանսիայի գործով 2006թ. հոկտեմբերի 24-ի թիվ 6253/03 վճիռը, կետեր 94-103): Այս իրավիճակն առկա է եղել 2005թ. փետրվարի 25-ից 2006թ. դեկտեմբերի 15-ն ընկած ողջ ժամանակահատվածում, երբ նա գտնվել է Սզեգեդի բանտում: Դատարանի համար նշանակություն չունի, թե արդյոք բանտակիցները դա արել են կամավոր կերպով, թե՛ ոչ (cf. Ֆարբուտուսն ընդդեմ Լատվիայի գործով 2004թ. դեկտեմբերի 2-ի թիվ 4672/02 վճիռը, կետ 60): Ապա Դատարանը հաստատում է, որ վիճարկվող հանգամանքները եղել են շարունակական (տես Պ.Մ.-ն ընդդեմ

Հունգարիայի գործով թիվ 23636/94 վճիռը, Հանձնաժողովի՝ 1998թ. սեպտեմբերի 9-ի չիրատարակված հաշվետվությունը), ինչը պետք է քննվի ամբողջությամբ:

28. Ավելին, Դատարանը նկատում է, որ դիմողի հայտարարությունները՝ տեղափոխելիս իր ողբալի վիճակի մասին, չեն հերքվել Կառավարության կողմից՝ կապված ամրագրու բացակայության պայմաններում դիմողին տեղափոխելու հետ, ինչն ակնհայտորեն տեղի է ունեցել միայն 2006թ. օգոստոսի 1-ին: Դատարանը հատկապես ցավալի է համարում այն փաստը, որ դիմողին քարշ են տվել մեքենա նստեցնելիս և մեքենայից դուրս հանելիս, որը տեղի է ունեցել 2006թ. հունիսի 12-ին: Վերջինիս կապակցությամբ Դատարանը պետք է պարզի, որ դիմողին 4-րդ կարգի բանտարկյալ որակելը, արդյունքում՝ ձեռնակապերով նրան պահելը, ավելացրել են այս կերպ տեղափոխվելու հետ կապված բարդությունները: Դատարանը մատնանշում է այս առթիվ CPT դիտարկումները՝ կապված Հունգարիայում 4-րդ կարգի բանտարկյալի որակման հետ (տես՝ վերը՝ կետեր 17-18):

29. Վերջապես, Դատարանը դիտարկում է հետապնդելու անթույլատրելիությունն ապացույցների բացակայության դեպքում, որը ներկայացված է դեպքի առթիվ դիմողի՝ 2006թ. սեպտեմբերի 4-ի բողոքում (տես՝ վերը՝ կետեր 12 և 13): Դատարանը գտնում է, որ դիմողին՝ անդամալույծ բանտարկյալին, բժշկական հետազոտության ուղարկելը հետաձգելը վիճարկվող միջադեպից հետո՝ անհամատեղելի է 3-րդ հոդվածով իշխանությունների վրա դրված պարտականության հետ, համաձայն որի՝ նրանք պետք է իրականացնեն համարժեք քննություն վատ վերաբերմունքի կապակցությամբ ներկայացված բողոքների առթիվ (տես՝ Քննատին ընդդեմ Հունգարիայի գործով 2003թ. դեկտեմբերի 16-ի թիվ 57967/00 վճիռը):

30. Նախորդ դիտարկումները բավարար են, որպեսզի Դատարանը եզրակացնի, որ Սզեգեդի բանտում բանտարկված լինելու ժամանակահատվածում դիմողը ենթարկվել է նվաստացնող վերաբերմունքի: Չնայած Կառավարության նախաձեռնած գովելի միջոցներին, որոնք նպատակ են ունեցել բարելավել նրա վիճակը 2006թ. դեկտեմբերի 15-ին նրան հատուկ հիմնարկ տեղափոխելով, այն է՝ հատուկ ու շատ ուշ է եղել Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտումը շտկելու համար:

II. Կոնվենցիայի 41-րդ հոդվածի կիրառումը

31. Կոնվենցիայի 41-րդ հոդվածի համաձայն՝

Եթե Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից Արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանը որոշում է, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի փոխհատուցում տրամադրել:

A. Վնասը

32. Դիմողը պահանջել է 12,000 եվրո (EUR)՝ ոչ նյութական վնասի դիմաց:

33. Կառավարությունն առարկել է այս պահանջը:

34. Դատարանը տրամադրում է պահանջվող ողջ գումարը:

B. Ծախսեր և ծախքեր

35. Դիմողը պահանջել է նաև 3800 եվրո Դատարանում առաջացած ծախսերի և ծախքերի դիմաց: Այդ գումարը համապատասխանում է փաստաբանի 31-ժամյա աշխատանքին՝ համաձայն ներկայացված ժամացանկի, որը հաշվված է ժամը 120 եվրո, գումարած 80 եվրո՝ գրասենյակային ծախսերը:

36. Կառավարությունն առարկել է այս պահանջը:

37. Դատարանի նախադեպերի համաձայն՝ դիմողն ունի ծախսերի և ծախքերի փոխհատուցման իրավունք միայն այն դեպքում, եթե ապացուցվում է, որ դրանք փաստացիորեն և անհրաժեշտաբար առաջացել են և ողջամիտ սահմաններում: Տվյալ գործով, հաշվի առնելով իր տրամադրության տակ եղած փաստաթղթերը,

ինչպես նաև վերը նշված չափանիշը՝ Դատարանը հիմնավոր է գտնում ողջ գումարի տրամադրումը:

Դատարանն անհրաժեշտ է համարում. որ փոխհատուցումը չվճարելու դեպքում տոկոսները պետք է հիմնված լինեն Եվրոպական Կենտրոնական Բանկի կողմից սահմանված տոկոսադրույքի վրա, որին պետք է ավելացվի երեք տոկոս:

ՎԵՐՈԳՐՅԱԼԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱԶԱՅՆ

1. Հայտարարում է դիմումն ընդունելի:
2. Վճռում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում:
3. Վճռում է,
 - (a) որ պատասխանող պետությունը Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ վճռի օրինական ուժի մեջ մտնելու պահից երեք ամսվա ընթացքում դիմողին պետք է վճարի հետևյալ գումարները, որոնք պետք է հաշվվեն հունգարական ֆորինտով վճռի հրապարակման օրը գործող տոկոսադրույքով.
 - (i) 12000 եվրո, գումարած բոլոր հարկերը, ոչ նյութական վնասի դիմաց.
 - (ii) 3800 եվրո, գումարած բոլոր հարկերը, ծախսերի և ծախքերի դիմաց.
 - (iii) որ վերը նշված երեք ամսվա ժամկետը լրանալուց հետո տոկոսները պետք է վճարվեն Եվրոպական կենտրոնական բանկի հաստատած տոկոսադրույքով՝ հավելած երեք տոկոս.
4. Մերժում է դիմողի պահանջի մնացած մասը արդարացի փոխհատուցման վերաբերյալ:

Կատարվել է անգլերենով և գրավոր հրապարակվել 2010թ. մայիսի 20-ին՝ Դատարանի կանոնների 77-րդ կանոնի 2-րդ և 3-րդ կետերին համապատասխան:

*Նախագահող՝
Քարտուղար՝*

Սալլի Դոլլե
Ֆրանսուա Թուլկենս

